Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3184

616.9
S-40

2010

12002

ԴԻ. Դ. ՑԷՐ-ԽՈՀԱՆԵՆ

№ 4

ԽՕԼԵՐԱ

ՌԵԺԻՍԵՈՒՄ Է
ՀՐԻ



616
S-40

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ
Տպարան Ց. Դասապետեանցի
1904

101

ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ

ՄՕՐՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ



16390

Дозволено Цензурою. 6-го Октября 1904 г., г. Тифлисъ.

116
38

Тип. А. Касабянца, Александрополь.

616.9 ur
S-40

ԽՕԼԵՐԱ

Շատ ժամանակ չէ, որ անցել է 1892 թուականը։ Որևէ 12 տարուայ ժամանակամիջոց բաժանում է մեզ անցեալ համաճարակից։ Այն ժամանակ խօլերան, յայտնուելով Պարսկաստանում, կեղտոտութեան ճանապարհով, անցաւ Բագու և այստեղից տարածուեց Կովկասի գրեթէ բոլոր քաղաքներն ու գիւղերը։ Դեռ թարմ են մեր յիշողութիւնները այդ խօլերայի մասին։ Համաճարակից մեռած հարիւրաւոր մարդկանց յիշատակը դեռ չէ անցել մեր մտքից, երբ յանկարծ մենք վկայ ենք կրկին նոյն ժողովրդական ախտին, որը Պարսկաստանում, օրական հարիւրաւոր զոհեր տանելուց չբաւականանալով, ներս է մտել մեր սահմանները։ Մեր հարևան Բագուում արդէն սկսուել է կոտորածը, թէպէտ առ այժմ օրը 10—20 հոգի են մեռնում, բայց երկիւղ կայ, որ կընդունի մեծ ծաւալ, ինչպէս 1892 թը-

վին էր, ուստի ամեն կերով պէտք է աշխատենք պաշտպանուել, առաջն առնել, որ նա չգայ, չտարածուի մեր մէջ, վաղաժամ գերեզման գլորելով մեր սիրելիներին. բայց եթէ իսպառ նրա առաջն առնել անհնար կըլինի, գոնէ հոգանք, որ քիչ թւով զոհեր տանի մեզանից։ Այսպիսի վտանգնախատեսնելիս՝ պէտք է առաջ գործ դնել նախապաշտպանողական միջոցներ, որ յետոյ ուշ չըլինի նրա դէմ կռուելը,— պէտք է զինուել գիտութեան տուած զէնքերով—բժշկական խորհուրդներով, որ կարողանանք գիտակցօրէն կռուել նորա դէմ։ Թէ գիտութիւնը որքան զօրաւոր միջոց ունի համաճարակների դէմ կռուելու, դրան պարզ օրինակ կարող է համարուել վերջին 1901 թուի ժանդախտը, որ Օդէսսայում երևեցաւ։ Դէս միլիոնից աւելի բնակիչ ունեցող քաղաքում միայն 17 հոգի հիւանդացան, իսկ սրանցից միայն 4 հոգի մեռան։ Այս թիւը որքան տարբեր է Թէհրանում և այժմ Թաւրիզում մեռնողների թուից (500—900 հոգի օրեկան։!!)

Բայց թէ ինչու 1901 թուի ժանդախտն Օդէսսայում մեծ ծաւալ չ'ստացաւ և չանցաւ քաղաքից դէպի շրջակայքը, չտարաւ հազարաւոր զոհեր, ինչպէս 1892 թուի խոլերան

Բագուում և Երևանում, որովհետև այնտեղ միլիոնաւոր ծախսեր չընայելով, անմիջապէս ձեռք առնուեցին բժշկական միջոցներ, որոնց շնորհիւ ժողովուրդը պաշտպանուեց ժանդախտից. մինչդեռ Բագուում և Երևանում այդ միջոցները թոյլ լինելուց, զոհերի թիւն անհամեմատ աւելի եղաւ, քան թէ կարող էր լինել։

Առաջարկելով այս գրքոյկը ընթերցող հասարակութեանը, կազմողի միակ դիտաւորութիւնն է եղել ծանօթացնել ժողովրդի հասարակ դասակարգին խոլերայի էութեան հետ և տալ խորհուրդներ նրան դիմադրելու և նրանից անվնաս մնալու համար։

Վարակիչ թոյներն առհասարակ իրանց աճելու համար նպաստաւոր հող են գտնում անմաքրութեան, ապականութեան մէջ։ Այդ տեսակ թոյներից է *խոլերայի բացիլը*, որի բուն հայրենիքը Հնդկաստանի Գանգէս գետն է։

Այդտեղի կլիման շատ տաք է, գետի ափերը ճահճային, ափերի մօտ կատարւում են *ընտանական* հնդիկների զոհարերութիւնը, որոնց արիւնը նեխւում, ապականում է օդը և բազմացնում խոլերայի ու ժանդախտի թոյները։

Երկիրն անպաշտպան լինելով՝ համաճարակը շուտով տարածուում է չորս կողմ, այսուհետև հեշտութեամբ անցնում է Պարսկաստան և շրջակայ երկրները։ Դժուար է յուսալ, որ երբ և իցէ Դանդէսի տիրը կըզտարինվարակիչ հիւանդութիւնների բոյն լինելուց։

Խոլերայի հայրենիքն Ասիայում լինելու պատճառով ընդունուած է նրան անուանել *Ասիական խոլերա*, միւս տեսակից զանազանելու համար, որ կոչւում է *Տեղական խոլերա*, որը համարեա ամեն ամառ պատահում է շոգ տեղերում։ Տեղական խոլերան այնքան թոյլ է լինում, որ նրան դատում են հասարակ հիւանդութիւնների շարքը։

Ասիական խոլերան՝ շրաւականանալով իւր զօրերով, որ տանում է իւր ծննդավայրում, ժամանակ առ ժամանակ դուրս է գալիս սահմաններից և աւերածներ առաջացնում ուրիշ երկրներում. այսպէս օրինակ՝ 1823 և 1838 թուականներին, այնուհետև 1839—42 թուականներին մեծ վնասներ հասցրեց Կովկասում, որի յիշատակը մինչև օրս մնացել է ժամանակակից մարդկանց յիշողութեան մէջ։ Նոյնպէսի վնասներ տուեց վերջին ժամանակներում յայտնուած խոլերան 1847, 1855—57 թուե-

ին, յետոյ 1865—66 թ. և վերջապէս 1892 թուին։

Խոլերան կպչող, վարակիչ հիւանդութիւն է և եթէ սկզբից հարկաւոր միջոցները ձեռք չառնենք, մէկ հիւանդը կարող է վարակել մի ամբողջ գիւղ, քաղաք, նոյն իսկ մի ամբողջ երկիր։ Բաւական է օրինակ, որ հիւանդի արտաթորութեան մի անչնչան մասը կպչի առողջ մարդու ձեռքերին և մի կերպ ընկնի նրա բերանը և ապա կերածի հետ անցնի նրա ստամոքսը և աղիքները, այդ մարդը իսկոյն կըվարակուի խոլերայով։ Կամ թէ հիւանդի սիրտը քանդուելիս, եթէ մի կաթիլ անգամ թռչի մօտը կանգնողի շրթունքին, և նա բանի տեղ չդնի, նոյնպէս ուտելիքի կամ խմելիքի հետ անցնի բերանն ու ապա ստամոքսը և աղիքները և ահա արդէն այդ երկրորդն էլ վարակուեց։

Այսպէս ուրեմն, անպայման կարելի է վարակուել *հիւանդի արտաթորութիւնից, սըրտից յետ եկած լորձունքից*, նրա կեղտոտ շորերից և գործածած իրեղէններից, կամ ձեռքից առած բոլոր առարկաներից, որովհետև դժուար է կարծել, որ դրանք աղատ լինին խոլերայի բացիլներից։

Կարելի է վարակուել առանց հիւանդի հետ միմեանց անմիջական դպնուելով, բաւական է միայն զործ ունել հարեան հիւանդ տանից բերած կեղտոտ, վարակուած իրեր, կամ ուտել խոլերայով բռնուած հիւանդի խառնուածներից զնած մրգերը և այլ մթերքները։

Բայց թէ ինչպէս է մարդ վարակւում, կամ ինչն է պատճառը, որ հիւանդի փսխածի ու արտաթորութեան մի անկատելի կաթիլն անդամ առաջացնում է այսպիսի սոսկալի հիւանդութիւն, այդ կըտեսնենք խսկոյն։

Այժմ այլեւ ոչ մի կասկած չկայ, որ ամեն մի տարափսիկ հիւանդութիւն ունի իրան *յատուկ բացիլը կամ միկրոբը*։ Եթէ մէկի արեան մէջ մտցնենք, օրինակ, ժանդախտի բացիլը, նա կըհիւանդանայ անպատճառ ժանդախտով։ Եթէ երեխային վարակենք դիֆտերիտի բացիլով, երեխան կըհիւանդանայ դիֆտերիտով։ Եթէ մէկը վարակուի խոլերայի բացիլով, նա կըհիւանդանայ միմիայն խոլերայով և ոչ թէ ժանդախտով կամ դիֆտերիտով և այլն։ Բացիլը հասարակ աչքով անտեսանելի շատ փոքր բան է. նրան հաղիւ կարելի է նըշմարել խոշորացոյցով դիտելիս, այն էլ մօտ 1000 անգամ մեծացրած։ Պրոֆ. Կոխը 1884 թուին

խոշորացոյցի օգնութեամբ երկար աշխատելուց յետոյ հաստատեց, որ խոլերայի թոյնը խոլերային *յատուկ ստորակետի ձեւ ունեցող միկրոբներն են արտադրում*։ Այդ բացիլները աճում են այնքան արագ, որ մի օրում նրանցից մէկը տալիս է միլիոնաւոր իրանց նման բացիլներ, որոնք իրանց հերթում աճելով 2-3 օրում ոտոտափելի թիւ են կազմում և մի քանի օրուայ մէջ իրանցից թոյն պատրաստելով վարակում են ամբողջ կազմուածքը։ Միայն այդ անհաշիւ արագ աճելն է պատճառը, որ չնայելով բացիլի



Խոլերայի բացիլները մեծացրած խոշորացոյցով 800 անգամ։

անհնարելի մեծութեանը, շատ շուտ թմրեցնում է կաղնուածքը և կարճ միջոցում մեռցնում։ Վերև բերածս նկարի մէջ բացիլները միացրած են մօտ 800 անգամ ամեն մէկը։

Բացիլի բազմանալու և թոյն արտադրելու ամենայարմար տաքութիւնը 30-40 աստիճանն է, այսինքն համարեա մարդու մարմնի տաքութեան չափը։ Նա թէև աւելի բարձրաստիճան տաքութեան էլ է դիմանում, սակայն այդ գրութեան մէջ նա չի կարող աճել, իսկ *եռացած ջրում անպայման սատակում է։* Զմեռուայ սառուցեալ գրաները թէպէտ արգելք են լինում նորանց զարգանալուն, բայց և այնպէս այդ գրաներին նորանք չեն ոչնչանում։ Հէնց որ եղանակը տաքանում է, բարեյաջող պայմանների մէջ լինելով, զարթնում են ու զարգանում։ Բացիլների զարգացմանը նպաստող անհրաժեշտ պայմաններից մէկն է *ջուրը եւ խոնաւութիւնը,* այն ինչ առանց դրանց, *հողութեան մէջ նը-ռանք շուտով ոչնչանում են։*

Վարակուելու գլխաւոր և համարեա միակ ճանապարհը *ներքին է,* այն էլ ուտելիքի ու խմելիքի միջոցով։ Եթէ բացիլները վերոյիշեալ սրեէ կերպով ընկնում են մարդու առողջ ստամոքսի մէջ, այնտեղ նորանք ստամոքսի հիւթե-

ի զօրութեամբ մարսւում, ոչնչանում են և հիւանդութիւն չեն առաջ բերում, իսկ երբ ստամոքսը խանգարուած է լինում, բացիլներն անվնաս անցնում են զէպի աղիքները և այնտեղ սկսում են զարգանալ ու թոյն արտադրել։

Առհասարակ խոլերան օդի միջոցով չի տարածւում, սակայն խոլերայով հիւանդի սենեակի փոշին կարող է իւր հետ բարձրացնել իւր վրայ նստած բացիլը և նորից նստել ուտելիքների վրայ (հացի և այլն)։ Նոյն իսկ օդը ներշնչելուց նա կարող է մտնել բիլթը և անցնել աղիքները։ Ուրեմն փոշիով լցուած օդը նոյնպէս վնասակար և վարակիչ է հիւանդի շրջապատողների համար. այդ պատճառով պէտք է հոգալ, որ խոլերայի ժամանակ հիւանդի սենեակում փոշի չբարձրանայ։

Ընդհանրապէս խոլերայի համաճարակները լինում են տաքուայ ամիսներում, որովհետև, ինչպէս վերևն ասուեց, տաքութեան մէջ (ոչ շոր արեի առաջ) նորանք լաւ են զարգանում, իսկ ցրտից նորանց զարգացումը կանգ է առնում։

Թէ կանայք և թէ տղամարդիկ հաւասարապէս հիւանդանում են խոլերայով. նկատուած է, որ երեխաներն ու ծերերը աւե-

լի քիչ են ենթարկում հիւանդութեանը։

Խօլերայով ամենից հեշտ վարակւում են *ստամոքսի խանգարում ունեցողները*. ուրիշ խօսքով, ով որ հաց ուտելուց յետոյ սրտի ծակոցի կամ վրնելու սովորութիւն ունի, որովհետև բացիլները ստամոքսումը ընկնելիս, այդ դէպքում չեն մարսւում։ Դրանից հետևում է, որ խօլերայի ժամանակ պէտք է աշխատել գլխաւորապէս լաւ պահպանել ստամոքսը և նրա խանգարման միջոցին դիմել բժշկի օգնութեան։

Մարմնական ծանր աշխատանքով չպէտք է սպառել ոյժերը և թուլացնել անդամները. պարզ է, որ որքան մարմինը թոյլ լինի, այնքան հեշտ ենթակայ կլինի հիւանդութեանը։ Օրական 12-15 ժամ աշխատողը պէտք է բաւականանայ 8-10 ժամուայ աշխատանքով։ Աշխատաւորի թուլացած մարմինն ամրացնելու միջոցներից մէկն է և *անունի լաւութիւնը*, որի շնորհիւ մարմինն ոյժ կ'ստանայ թշնամի բացիլներին դիմադրելու։

Ոնոջներն ու անկանոն կեանքը վնասակար են խօլերայի ժամանակ։ Վարած անկանոն կեանքի պատճառով հետզհետէ թուլանում է մարմինը և շուտ որսամատրւում հիւանդանալու։

Արբեցողներին անպայման ամենի հեշտ կ'ենթարկուին վարակման, որի կերը կըլինի անխուսափելի մահը։

Խօլերայով վարակուելու ամենամեծագոյն ճանապարհներից մէկն է ջուրը։ Ագրիւբների ջրերը, որոնք պահպանուած են վարակուելուց կատարելապէս զուրկ խողովակների միջով հոսելիս, անվնաս են ընդհանրապէս. ընդհակառակը *գետերի և ջրհորների ջրերը շատ վտանգաւոր են։* Կանգնած ջրհորները ծծում են իրանց մէջ շրջապատող կեղտոտուած հողի անմաքրութիւնները։ Ուրեմն եթէ հարևան արտաքնոցներում խօլերայի բացիլներ լինին, այդ ճանապարհով հեշտութեամբ կարող են նրանք անցնել ջրհորները։

Գետերի ջուրը վնաս է նրանով, որ այնտեղ թափւում են հարևան քաղաքներից և գիւղերից ամեն տեսակ անմաքրութիւններ։ Շատ անգամ այդտեղ լուացւում են դորգեր, կարպետներ, շորեր և այլն։ Իհարկէ համաճարակի ժամանակ լուացւում են և խօլերայով հիւանդի շորերը։ Բացիլները անցնում են ջրի մէջ, կոչում են առողջներին կամ խմելուց կամ ընում հում ջրի հետ և այդպէսով վարակում գործածողներին։

Համաճարակի ժամանակ պէտք է հոգալ ամենից առաջ, որ ջուրը անվնաս դառնայ. և որովհետև սաստիկ տաքութիւնից, ինչպէս վերևն ասուած է, բացիլները մեռնում են, ուստի անհրաժեշտ հարկաւոր է, որ զոլոր ածող ջուրը նախապէս եռացուի, դրանից յետոյ կարելի է հանգիստ սրտով զոլոր ածել թէ ուտելիքի, և թէ խմելիքի մէջ։

Եթէ հիւանդի արտաթորութիւնը առանց ախտահանելու լցնենք դուրս, հողի միջոցով բացիլները կ'անցնեն ջրհորները և ջուրը վարակելով, վտանգաւոր կը դառնան զոլոր ածողների համար։ Ուստի պէտք է զգոյշ լինել և ջրհորների շուրջը չ'յուանալ հիւանդի շորերը, կամ չը թափել կեղտոտութիւնները առանց ախտահանելու նրանց ներքևում յիշուած միջոցներից մէկով։

Համաճարակների ժամանակ վախկոտ մարդիկ ընկնում են նեարդային դրութեան մէջ, միշտ կասկածը սրտերում, տրամադրուում են հիւանդանալու։ Այդպիսիները վախենում են ուտելուց, խմելուց և ամեն մի չնչին փոփոխութիւն նրանց առ ու դոզի մէջ է ձգում։ Նրանք պիշիր ցերեկ հանգիստ չունեն, որի շնորհիւ թուլանում է մարմինը և անտունդ ու անհանգիստ

մնալով, քայքայուում են նեարդերը և հիւանդութեան հասցնում։ Ուստի խօլերայի ժամանակ ոչ թէ պէտք է վախենալ, այլ աշխատել խելացի կերպով դիմադրել նրան։ Մարդ կարող է նոյն իսկ հիւանդանալ, բայց հէնց սկզբից խելացի միջոցներով կարող է անվնաս դարձնել հիւանդութիւնը։

Որպէսզի անտեղի չանհանգստանալ և չը երևակայել այն՝ ինչ որ իսկապէս գոյութիւն չունի, պէտք է ծանօթ լինել հիւանդութեան իսկական պատկերի հետ։

Խօլերայով վարակուածը մի քանի օր բնաւ չի զգում իւր վարակուելը. այդ օրերը վարակման «դաղանի շրջան է» ասում. նա երբեմն ունենում է մի փոքր գլխացաւ և ամբողջ մարմնի թուլութիւն, կարծես ջարդուած լինի։ Երեք չորս օրից յետոյ յանկարծ հիւանդը սկսում է սիրտը յետ բերել (փսխել) առանց մի սրեվ յայտնի պատճառի, որի հետ միասին լուծ է սկսում։ Լուծը քանի գնում սաստկանում է ու դուրս է տանում հիւանդին մօտ 20-30 անգամ օրը. այդ դրութիւնը տևում է 1-3 օր մինչև հիւանդը այժմասպառ է լինում և մահանում, կամ բարեյաջող դէպքում նրա դրութիւնը փոխուում է դէպի լաւը. լուծը կան-

զնում է և մի քանի օրուայ նա արդէն առողջանում է։ Շնայելով սաստիկ փորլուծութեան, հիւանդը փորում ոչ մի ցաւ չէ զգում, բացի ավիշների գաղտոցից։ Քանի լուծը քիչ է կղկղանքը թէպէտ ջրալի, բայց իւր սովորական գոյնը ունի, իսկ երբ լուծը սաստկանում է, կղկղանքի գոյնը դառնում է ոսկեգոյն, ինչպէս բրինձի ջուր։

Պարզ բան է, երբ մարմնից այդքան հեղուկ է քամւում, նա պէտք է թաշուի, չորանայ. այդպէս էլ պատահում է։ Հիւանդի կաշին կորցրնում է բնական գոյնը և փափկութիւնը. մարմինը սառչում է, ջերմաչափը ցոյց է տալիս 35-36, այսինքն բնականից ցած, որովհետև թանձրացած արիւնն առաջուայ պէս արագ չի շարժւում երակների մէջ. ներանը չորանում է, աչքերը փոսն են ընկնում և նրանց շուրջը կապտում. հիւանդի մէզը կամ սաստիկ քշանում է, կամ բոլորովին կտրում. շնչառութիւնը դժուարանում է և հիւանդը օդի պակասութիւն է զգում։ Նրա կուրծքը սեղմւում է, ձայնը կտրում. *ձեռքերը եւ ոտները սաստիկ ցընցում, քաշտում են.* այս բոլորը հիւանդութեան ընթացքում, սաստիկ ծարաւի հետ միասին, հանգիստ չեն տալիս խեղճին։

Այս տանջանքը տևում է 2-3 օր, մինչև որ հիւանդը կամ մեռնում է, կամ վերոյիշեալ նշանները կամաց-կամաց թուլանում են, չքանում, և մի քանի օրուայ հիւանդն իրան առողջ է զգում. ծնում է ընդհանուր մարմնի թուլութիւնը, որը շուտով անհետանում է։

Կայ և խօլերայի թեթև տեսակը։ Այդ ժամանակ ընդհանուր թուլութեան հետ միասին օրական 5-10 անգամ լուծ է պատահում և միաժամանակ մի քանի անգամ սիրտը յետ է գալիս։ Սակայն այս երևոյթը երկար չի տևում, շուտով կանգ է առնում, և մի քանի օր յետոյ բոլորովին վերջանում է։ Այս դէպքում ոչ մարմինն է սառչում, ոչ հիւանդն է ուժասպառ լինում և ոչ էլ մէզը կտրւում, ինչպէս խօլերայի ծանր դէպքում։

Սարսափելի է խօլերայի սրընթաց տեսակը, որը բարերախտաբար յաճախ չի պատահում։ Այս վերջին տեսակի ժամանակ բոլոր վերոյիշեալ նշանները առաջ են գալիս մի քանի ժամուայ ընթացքում։ Ցանկարծ հիւանդը թուլանում, ուժասպառ է լինում. սաստիկ լուծը շատ շուտ սառեցնում է հիւանդի մարմինը և դեռ կէս օր չանցած՝ նա արդէն անյուսալի է դառնում։

ՀԱՅ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊՈՒՅՆՈՒՅԱՆ

Երբեմն պատահում է, որ կարծես թէ հիւանդը առողջանում է. խօլերայի բոլոր նշանները անցնում են, լուծը կանգնում է, սիրտը այլեւս չի յետ դալիս, սառած մարմինը տաքանում է, մէզը բացւում, զարկերակը խփում է իւր սովորական այժով, հիւանդի ախորժակը բացւում է և այլն. շրջապատողների ուրախութեանը սահման չկայ. մէկ էլ յանկարծ հիւանդի տաքութիւնը սկսւում է բարձրանալ մինչև 39-40 աստիճան, սկսւում է սաստիկ գլխացաւ, հիւանդը գառանցում է և երեսը կարմրում։ Մի քանի օր, երբեմն մի շաբաթ այդպէս տեւում է, մինչև այդ դրութիւնը կամ անհետանում է կամ քանի գնում սաստկանում է. սրանց վերայ աւելանում է կրկին փորլուծութիւն, բայց այս անգամ սարսափելի դարշելի հոտով, կղկղանքի մէջ խառն են լինում արիւն ու թարախ։ Երբեմն էլ դորա վերայ աւելանում է թոքերի բորբոքում, կամ հիւանդի կոկորդում դիֆտերիտի վէրքեր են բացւում, մարմնի դանագան տեղերում ուռոյցներ են երևան գալիս և խօլերայից այժասպառ եղած մարմինը այլեւս չի կարողանում տանել նոր վրայ եկած հիւանդութիւնները, այնպէս որ նա անշնչանում է։

Ահա սրանք են հիւանդութեան արտաքին նշանները, որ պէտք է ճանաչէ իւրաքանչիւր մարդ ով խօլերայի մասին կասկած ունի։ Այս նշաններն երևալուն պէս՝ խոհոյն պէտք է բժիշկ հասցնել, որպէսզի նա կարողանայ շուտով միջոցներ ձեռք առնել թէ հիւանդին ազատելու և թէ շրջապատողներին վարակուելու վտանգից հեռու պահելու համար։

Հիւանդութիւն պատահած դէպքում, միայն բժիշկ հրաւիրելով չպէտք է բաւականանալ, այլ անհրաժեշտ է յայտնել այդ մասին և այն սանիտարական մասնաժողովին (санитарная комиссія), որ կազմւում է ամեն անգամ համաճարակ յայտնուելիս։

Որտեղ որ կայ հիւանդանոց, ամենից լաւն է հիւանդին այնտեղ տեղափոխել. հաւատացած եղէք, որ այնտեղ ձեր հիւանդը կըստանի ամեն յարմարութիւններ բժշկուելու, բացի այդ, տանից դուրս բերելով հիւանդին, նրա ընտանիքը և մերձաւորները ազատուած կըլինեն վարակուելու վտանգից։ Իսկ որտեղ հիւանդանոց չկայ, հիւանդին պէտք է տանել մի մաքուր, չոր և լայն սենեակ, պարկեցնել փափուկ կողինքի մէջ, տակը տեղաշորի վրայ դնել միմեծկլեոնկայ,

(մուշամբա)։ Եթէ այդ յարմարութիւնները չեն ճարուիլ, լաւ է հիւանդին պարկեցնել խոտ լցրած ներքնակի (դոշակի) վրայ, որովհետև խոտը կարելի է այրել և աշնաշունչ կարևոր դէպքում, այսինքն կեղտոտուելիս. իսկ վրայի կտորը եռացրած ջրով կամ գեղերով ախտահանել, և նորից խոտ լցնել։

Սեղանները, ամանները և ուրիշ իրեղէնները կարելի է լուանալ սուլէմայի ջրով թրջած սպունգով կամ շորով։

Հիւանդին խնամողները պէտք է հագնեն սպիտակ, երկար շապիկ և խոկոյն փոխուին, եթէ կասկած լինի որ հիւանդի արտաթորութիւնով կեղտոտուել է, և անմիջապէս եփ տալ ջրի մէջ։ Հիւանդապահը ինչպէս իւր շորերը, այնպէս էլ ձեռքերը պէտք է գեղերով շատ-շատ ախտահանէ։

Հիւանդը առողջանալուց կամ մեռնելուց յետոյ՝ նրա տեղաշորը, տան բոլոր անարժէք և էժանագին իրեղէնները պէտք է այրել, եթէ կասկած կայ վարակուած լինելուց, իսկ մնացած իրեղէնները ախտահանել նոր եղանակով, որի մասին յետոյ խօսք կլինի։

Եթէ սենեակի յատակը հողից է, կարելի է վրան շոր կիր ցանել։

Հիւանդի կղկղանքը եւ փսխածը պէտք է իսկոյն լցնել մի փոսի մէջ եւ վրան կրաջուր ածել։ Նրա շորերը անմիջապէս պէտք է ղեղերով ախտահանել եւ ապա ջրի մէջ լաւ եփելուց յետոյ զործածել։

Այդ բոլորը կատարելուց յետոյ, պարտաւորեցուցիչ պէտք է լինի մեզ համար նաև մեռածի դիակը թաղել որքան կարելի է խորունկ, յատուկ նշանակած գերեզմանատանը, իսկ վրան բաւականաչափ կիր ածել։

Համաճարակի ժամանակ ամեն որ հիւանդութեան նկարագիրը իմանալուց յետոյ, պարտաւոր է դիտենալ նաև թէ ինչ միջոցներ պէտք է գործ դնել մինչև բժշկի գալը, մանաւանդ այդ անհրաժեշտ է բժշկներից զուրկ գիւղերում։

Երբ որ մէկը հիւանդանում է, նրան իսկոյն պէտք է պարկեցնել, փորը փաթաթել ֆլանելով կամ ուրիշ բրդէ շորով. իսկոյն ամբողջ փորի վրայ պէտք է մանանեխի թերթ (горчичникъ) կպցնել, իսկ ոտների տակը և կողքերին շարել տաք շշեր կամ ապիւսներ, որպէսզի փորլուծութիւնից մարմինը չսառչի։ Եթէ սիրտը շարունակ յետ է գալիս, պէտք է խորհուրդ տալ սառուցի կտորներ կուլ տալ կամ

որևէ թթուաշ խմիչք խմել, որովհետև խոլերայի բացիլները թթու հիւթերի մէջ ոչնչանում են։ Իհարկէ այդ խմիչքները պէտք է պատրաստուած լինին եռացրած ջրով։

Ձեռքի տակ միշտ հարկաւոր է ունենալ *Ինոզեմցովի կամ Բոտկինի կաթիլները* (капли Иноземцева, Боткина), որոնք պարունակում են իրանց մէջ օպիում, թէև քիչ քանակութեամբ։ Այս դեղերը պէտք է տալ հիւանդին ջրի հետ, խառնելով 20-25 կաթիլ, իւրաքանչիւր 2 ժամը մի անգամ, մինչև լուծի դադարելը։

Արդէն ասուեց, որ հիւանդին տանջող նշաններից մէկն էլ ամբողջ մարմնի ցնցուել քաշուելն է։ Դրանց առաջն առնելու համար, ցնցող մասերը միշտ պէտք է տրորել կամ շոր բրդէ շորով, կամ կարելի է շորը թրջել քեաֆուրի իւղի (камфорное масло) մանանեխի ոդի մէջ (горчичный спиртъ)։ Հիւանդին խնամողները պէտք է հետևեն, որ նրա ձեռքերն ու ոտքերը չսառչեն։ Հէնց որ նկատուեց մի այդպիսի երկիւղ, պէտք է անմիջապէս հիւանդին տաք ջրի մէջ պարկեցնել և կամ վերև յիշուած միջոցներով (շիշերով և աղիսներով) տաքացնել մարմնի այդ մասերը։

Ուշադնացութեան դէպքում, հիւանդին պէտք է տալ Վալերեանի կամ Հոֆմանի կաթիլներ (Эфирно-Валеріановыя капли, Гофманскія капли) 20-ական կաթիլ մի քիչ ջրի մէջ, իւրաքանչիւր 2 ժամը մի անգամ. կարելի է տալ նաև կոնեակ կամ լաւ գինի։

Ցանկալի է որ ամեն ընտանիք համաճարակի ժամանակ տան մէջ ունենայ յիշեալ դեղերը, որպէսզի հարկաւոր բոպէին ձեռքերը ծալած՝ անօգնական չմնայ։ Այդ բոլորը կարելի է ստանալ դեղատներում առանց դեղատոմսի։

Հիւանդներին խոլերայի շիճուկով բժշկելու հարցը դեռ փորձնական շրջանում է. Բժ. Խաւկինը Հնդկաստանում ուրիշները, անգլին քանակութեամբ փորձեր են արել և անում, որոնք առ այժմ ցոյց են տուել, որ շիճուկը ունի նշանակութիւն իբրև նախազգուշացնող միջոց, իսկ իբրև բուժող միջոց, դեռ նա բաւականաչափ ոյժ չունի. յամենայն դէպս *պատուաստելուց ոչ մի վնաս չի կարող լինել* և ուրախութեամբ պէտք է ընդունել *պատուաստումն* եթէ առաջարկող լինի։

Որքան որ հարկաւոր է հիւանդին փրկելու համար աշխատել, աւելի ևս կարևոր է

ուշադրութիւն դարձնել, որ շրջապատող առողջները չ'վարակուին։ Դրա համար անհրաժեշտ է, ինչպէս վերև ասացի, հիւանդի հետ բոլորովին կտրել յարաբերութիւնները. նրա իրերը ախտահանել, որպէսզի կարելի լինի նրանց գործ ածել առանց վարակուելու։

Գետնի վրայ թափած իրերի ախտահանելու գործնական միջոցներից մէկն է և *կիրը*։ Նրան գործ են ածում կամ շոր-շոր, ցանելով արտաքնոցներում հիւանդի արտաթորութիւնների վրայ, կամ բացած. նրա-5 ֆունտը 1 վեդրո ջրի մէջ, նոյն նպատակի համար։

Շատ ուժեղ և գործածական է նաև *սուլֆման*, որը կարելի է ստանալ բժշկի դեղատոմսով և գործածել նրա խորհրդով։

Լաւ միջոց է և *կարբոլեան թթուտի* (карболовая кислота) ջրախառնուրդը. 1-2 թէյի գդալ այդ թթուտից պէտք է խառնել մի թէյի բաժակ ջրի մէջ և սրսկել նրանով հիւանդի իրերը, սենեակը, կամ լուանալ խնամողի ձեռքերը։

Էժան ախտահանութեան միջոցներ են նաև պղնձի արջասպը և երկաթի արջասպը։ Առաջինից պէտք է 2 մասը խառնել 100 մաս ջրի, իսկ երկրորդից 15 մասը 100 մաս

ջրի հետ լցնել հիւանդի կղկղանքի վրայ և ապա արտաքնոց թափել։

Բացի այս վերոյիշեալ միջոցներից, այժմ ախտահանիչ դեղերը գոլորշիացնում են զանազան մեքենաների միջոցաւ։ Թունաւոր գոլորշին թողնում են սենեակի մէջ 12 ժամ, որը հաւասարապէս տարածւում է ամբողջ սենեակում, մտնում է պատերի, յատակի և առաստաղի բոլոր ճեղքուածների մէջ, անցնում է գորգերի, շորերի ամենախորը ծալքերը ու սպանում, ընդհանուր անում բոլոր բացիլները։ Այս միջոցը թէպէտ նոր, բայց ամենահաստատուն է և ընդունուածը. և պէտք է պահանջել, որ հիւանդի բնակարանը անպատճառ այս միջոցով ախտահանուի։

Այժմ այդ ձևի ախտահանութեան ժամանակ գործածելի դեղը *ֆորմալինն* է։

Վերոյիշեալ բոլոր զգուշութեան միջոցները մեզ համար պարտաւորեցուցիչ պէտք է լինին, եթէ ուզում ենք ապատ մնալ վտանգից. իսկ եթէ չնայելով ձեռք առած զգուշութիւններին, խօլերան ներս է մտնում սահմանից և տարածւում է, մենք *պէտք է գործ դնենք հետեւեալ անհրաժեշտ նախապաշտպանողական միջոցները*։

Այդ միջոցներից ամենաառաջինը մաքրութիւնն է որովհետև, ինչպէս արդէն ասացինք, խոլերայի բացիլը զարգանում և աճում է գլխաւորապէս կեղտոտ տեղերում, նեխուող նիւթերով ծածկուած խոնաւ հողի մէջ, ինչպէս են՝—Դանդեն և Նեպոս գետերի ափերը։ Նրանք լիքն են ապականութիւններով, մարդկանց ու կենդանիների դիակներով, որոնք արևի ջերմութեան տակ նեխուելով՝ փտում են և աճեցնում վարակիչ հիւանդութիւնների միկրոբներին։ Այս բանին քիչ չէ նպաստում և արևելեան ժողովրդների անմաքրասիրութիւնը։

Ուրեմն ինչպէս տեսնում ենք, իւրաքանչիւր մարդու առաջին հոգը պէտք է լինի մաքրութիւնը և քանի դեռ չէ ոկսուել համաճարակը, պէտք է մաքրէ իւր շուրջը։

Բաւական չէ իւր սեփական տունը մաքուր պահել. ընդհանուր մաքրութիւնը պաշտպանելու համար, պէտք է բոլորս միասին համերաշխ գործենք այդ ուղղութեամբ, չխնայելով ոչ մի ծախս և աշխատանք։

Թէև քաղաքային վարչութիւնների գործն է հոգել մաքրութեան վրայ, բայց ամեն քաղաքացի պէտք է իւր կողմից գործին աջակցէ, համոզուած լինելով, որ իւր անձի ապահովու-

թիւնը սերտ կերպով կապուած է դրացու առողջութեան հետ։

Անհրաժեշտ է զետինը մարդկանց արտաթորութիւնից մաքուր պահել. դրա համար հարկաւոր է ունենալ կանոնաւոր, մէջը ցեմենտով սուսուած արտաքնոցներ և ամեն օր այն տեղ կրաջուր լցնել, խոլերայի թոյնը ոչնչացնելու համար։ Եթէ արտաքնոցներում հորեր ունենալը դժուար է, պէտք է անմաքրութիւնները լցնել տակառների կամ մէջը ցինկով կպցրած արկղների մէջ և դուրս տանել քաղաքից յատուկ դրա համար նշանակած տեղը թափել. յամենայն դէպս զետինը չպէտք է թրջել, իսկ եթէ թրջուի, պէտք է զետնի խոնաւութիւնը իսկոյն չորացնել չոր կրով։ Լուացքի ջուրը նոյնպէս ցանկալի է որ լցուի ցեմենտով շինուած հորերի մէջ, իսկ ծայրայեղ դէպքում կարելի է խառնելով նրա հետ ալոտահանիչ դեղերը, ցրիւ տալ արևկող տեղերը, որպէսզի շուտով ցամաքի։

Խոլերայի ժամանակ ընակարանը պէտք է լինի չոր, լուսաւոր եւ ընդարձակ։

Պէտք է դուռ-երդիք շուտ-շուտ բանալ օդը մաքրելու համար. լաւ է ցուրտ, բայց մաքուր օդում ապրել, քան տաք՝ և անմաքուր օդ շնչել։

Նկատուած է որ խոլերան կամ, ժանդախտը հետեւել են սովին, պատերազմներին և ուրիշ ժողովրդական աղէտներին. երբ ժողովրդի ստուար մեծամասնութիւնը ուտելիք չէ ունեցել, խոլերան վրայ է հասել և միլիոնաւոր մարդիկ կոտորել։

Խոլերայի ժամանակ խեղճ ազգատներին օգնել, կերակրելը ոչ թէ միայն բարեգործութիւն է, այլ նոյն իսկ ինքնապաշտպանութեան մի միջոց, որը անհրաժեշտ է ամեն մէկին։

Այդ է պատճառը, որ միշտ խոլերայի ժամանակ, ամեն տեղ ժողովուրդը ինքը ազգատ դասակարգի համար ձրի ճաշարաններ և թէյարաններ են հիմնում։

Համաճարակի ժամանակ մեծ ծառայութիւններ են մատուցանում հիւանդանոցները. միայն ցաւալին այն է, որ ժողովրդի ստէպ մասը հաւատով չի վերաբերւում դէպի այս անհրաժեշտ հիմնարկութիւնները և կարծում է, թէ թէ այնտեղ ուղարկում են մի միայն անյոյս հիւանդներին, ուրեմն մտնելուց յետոյ նրանց այլ ևս դուրս գալ չի կարելի։ Ընդհակառակը հիւանդանոցներում կան այնպիսի յարմարութիւններ, որպիսին ազգատներն իրենց տներում ունենալ երբէք չեն կարող։ Այնտեղ

թէ բնակարանը, թէ ուտելիք-խմելիքը, թէ պաշտպանողական միջոցները լաւ են և որ գլխաւորն է, հիւանդը միշտ գտնւում է բժշկի հսկողութեան տակ։

Այս էլ պէտք եմ համարում կրկնել, որ հիւանդին տանից հեռացնելն էլ պակաս բարիք չէ, քանի որ նրա ներկայութիւնը տան մէջ մշտական սպառնալիք է ընտանիքի միւս անդամներին։ Հեռացնելով հիւանդին տանից, դրանով հեռացրած կըլինիք եւ վարակման աղբիւրը։

Վերջացնելով գրքոյկս, վերոյիշեալ խրատները, նորից եմ կրկնում, ամփոփելով առանձին կէտերում, որպէսզի աւելի հեշտ լինի միտը պահելու համար։

1) Երբ յայտնւում է, որ մերձաւոր երկրում խոլերան կոտորածներ է անում, քաղաքներում և գիւղերում բանիմաց մարդիկ պէտք է միանան և անմիջապէս միջոցներ ձեռք առնեն մաքրելու փողոցները, հրապարակները, բակերը, ախոռները, աղբանոցները և մանաւանդ պէտք է կանոնաւորել արտաքնոցները և կեղտոտ ջրերի փոսերը։

2) Աղբերը, արտաքնոցների անմաքրութիւնները, կեղտոտ ջրերը պէտք է անպատճառ տանել գիւղից կամ քաղաքից դուրս մօտ

մէկ վերստ հեռաւորութեամբ և լցնել իշխանութեան կամ բժշկի նշանակած տիղերը, իսկ ինչ կարելի է այրել, անմիջապէս ոչնչացնել։

3) *Սենեակների լուսամուտները պէտք է շուտ-շուտ բաց անել եւ օդը մաքրել. այդ նպատակով չ'պէտք է գործ ածել ոչ մի ծխելու միջոցներ, ինչպէս հոտաւէտ մոմեր կամ թղթեր, որոնք օդը աւելի ապականում են։*

4) Պէտք է հետեւել, որ վերոյիշեալ պահանջները խստութեամբ գործադրեն հացթուխները, մսագործները, միրգ և ուրիշ ուտելու մթերքներ ծախողները, հիւանդանոցների, սրբարանների, բաղնիքների և ուրիշ դանազան գործարանների տէրերը։

5) Հոգալ անձնական մաքրութեան վրայ, շուտ-շուտ լողանալ բաղնիքում։ Գետերում, համաճարակի ժամանակ, չպէտք է լողանալ, որովհետեւ գետի ջուրը կարող է վերեւից վարակուած լինել բացիլներով։ Շուտ-շուտ պէտք է փոխել սպիտակեղէնը։

6) *Մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել խմելու ջրի վրայ. ամենից անվտանգ պէտք է համարել աղբիւրի ջուրը, եթէ մաքուր տեղով է հոսում. սակայն զգուշութեան համար միան-*

գամայն պէտք է ընդունել, որ խոլերայի ժամանակ ինչքան էլ մաքուր լինի ջուրը պէտք է եռացնել եւ յետոյ գործածել։

Գետերում լուացք անելը պէտք է արգելել։

7) *Բոլորովին հեռու պէտք է կենալ խոնաւ միջոցներից, մանաւանդ քեֆերից եւ արբելուց։* Բաւականութեան համար կարելի է միմիայն մասամբ գործածել թթուաշ խմիչքներ, այն էլ եթէ եփած ջրով է պատրաստած։ Գործածող եռացրած և պաղ ջուրը պէտք է հեռու պահել թէ հիւանդից և թէ այն ամենից, որոնց կպչելով կարող է վարակուել։

8) *Խոլերայի ժամանակ ամեն ինչ կարելի է ուտել եթէ միայն եփած է եւ դիւրամարս. արգելւում է ուտել ամեն տեսակ մրգեր, կանանչեղէն, եթէ նոյն իսկ նրանք լուացուած լինին ջրի մէջ, որովհետեւ ջրով չի կարելի հեռացնել նրանց վրայի բացիլները — եթէ կան։ Առհասարակ հեռու պէտք է լինել չափազանցութիւններից թէ ուտելու և թէ խմելու մէջ։*

Խոլերայով հիւանդի սենեակում չպէտք է ուտել կամ խմել, որովհետեւ ինչքան էլ զգոյշ լինիք, այնուամենայնիւ չէր կարող ապահով լինել բացիլներ կուլ տալուց։

9) Պէտք է հագնուել եղանակի համապատասխան, չմրսել, և մանաւանդ պէտք է տաք պահել փորը. նոյն իսկ փորի վերայ ցանկալի է միշտ ֆլանել կրել։

10) Զգոյշ պէտք է լինել *զանազան ժողովրդական միջոցներից*, ինչպէս էր կալդանը 1892 թ. զանազան լուծողականներից, սիրտ յետ բերող դեղերից և այլն. դրանք աւելի կրթուլացնեն մարմինը և կրտրամադրեն վարակուելու։

11) Ոչ մի փորացաւ չպէտք է անուշադիր թողնել խօլերայի ժամանակ և իսկոյն բուժկի դիմել։

12) Հաստատւում է որ ճանճերը ևս տարածում են խօլերան իրանց ոտքերի վրայ կպած բացիլների միջոցաւ, երբ նրանք նստում են ուտելիքների վրայ. ուրեմն ամեն ջանք պէտք է գործ դնել նրանց ոչնչացնելու։

Զմռռանանք որ այս ծանր կռուի մէջ յաջողութիւն ունենալու համար. *պէտք է ամեն մէկս գործենք ընդհանրութեան համար իսկ ընդհանուր միասին մէկի համար.* բաւական է որ այդ մէկը հիւանդանայ, ամբողջ գիւղեր, քաղաքներ և նահանգներ կարող են համաճարակի զոհ դառնալ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵՐ ԱԶԻԱՏԻԹԻՆՆԵՐԸ

Ժանդարմ (սպառուած է). . 5 կոպ.
Դիֆտերիտ . . . . . 5 կոպ.
Տրախոմա . . . . . 5 կոպ.

Գումարով գնողներին լինում է զիջում։

Դիմել՝ Александрополь,
Доктору Н. Теръ-Саакянъ

3184 /Ր

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0074289